

Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր Ե Գ Ի Պ Տ Ո Ս

փարաւոնք. անոնց քաղաքորոշիւնը, վարչութիւնն և պատմութիւնն, փարաւոնի պաշտօնն և վարչութիւնը. — Եգիպտոսի մատակարարութիւնն:

Եգիպտոսի թագաւորութեան ամե. նահին կերպն՝ միապետութիւնն է ըստ պատմութեան. և միապետաց հնա. դոյն մականունն, որ արդէն մեզ 'ի տը. զայութեանէ ծանօթ է 'ի Ս. Գրոց' է փարաւոն, անուն մը՝ որ կը նշանակէ « թագաւոր մեծի տան »:

Փարաւոն գերագոյն Աստուծոյ իւ. րե երկրաւոր ներկայացուցիչ կ'երեւի, որոյ հետ նաև հետեւեալ մականուամբ կը հաջորդէ՝ « Տէր Վերին և Ստորին Եգիպտոսի »: Եւ իրաւամբ կը կոչուի « Նախատիպ Ռայի 'ի մէջ կենդանեաց »: Յիւրաւի, յընթաց ժամանակաց այն. շափ եղաւ ժողովրդեան յարգանքն առ մեծագորն փարաւոն, որ արձանա. գրութեանց մէջ անոր իբրև ստորոգելի ընծայուած կը գտնուին աստուածային բաներ: Բայց թէ անոր աստուածու. թիւնն իրօք հաւատոց վարդապետու. թիւն չէր, կը հաւատարի այս պարա. գայէս միայն, որ տաճարի պատ. կերպց մէջ կը գտնենք զփարաւոնս՝ եր. կըրպագութեան ամենախոնարհ զրից մէջ առաջի աստուածոց:

Փարաւոն թագաւորութեան օծումը կ'ընդունէր՝ ի տաճարին, և ստուգիւ հին ժամանակ սովորութիւն էր՝ որ այս ա. րարողութիւնս կատարուէր « 'ի մեծի տան Աստուծոյ առ Անու (յեղիպօ. լիս) »: — Հանդէսն հետեւեալ կերպով կը կատարուէր:

Իշխանին քովէն՝ քուրմ տաճարին կ'ողջունեն զինքը յարգական ողջու. նիւ. իսկ զվստուր երգիչն աղօթք մը կ'ընէ հեռի առնելով 'ի թագաւորէն

զամենայն անարբութիւն: Այն ժամա. նակ թագաւորն կը դնէ զվարսակալը, և կը սրբութի ջրով և խնկով. կ'առնու. ծաղկապսակը և կը մտնէ 'ի սրբազան սենեակը՝ Աստուծոյ պատկերը յարգե. լու համար: Երբ դարձեալ դուրս կ'ել. նէ, առաջին յարգութիւնը կ'ընդունի: Ամէնքն յերկիր կը խոնարհին, և համ. բոյր կուտան իրեն. իսկ առաջիկայք կը պարտաւորին 'ի մասնաւորի փարաւոնի ծունկը համարուել: Ապա այսպիսի ա. զաղակաւ կ'ողջունեն զնա « Միշտ զար. գանայ. չկրէ երբեք ձախորդութիւն մը Օն քաղաքին բարեկամը »: և պա. տուանուանքն են՝ Տէր առամանդեայ պսակի, թագաւոր Վերին և Ստորին Ե. գիպտոսի, թագաւոր Սև և Կարմիր եր. կրի, (այսինքն է՝ երկրին Նիլոսի և ան. ապառին Եգիպտոսի), Տէր երկոցունց աշխարհաց: Իսկ մակդրական բացա. տրութեամբ կը կոչուէր՝ Նորին Սրբու. թիւն: փարաւոնաց չքանչաններն են վաղնջական օձն իբրև նշանակ իւր թա. գաւորական արժանապատուութեան, որ կը գտնուի իբրև զարդ 'ի զլուս թա. գուհւոյն. նոյնպէս արեգակնային սկա. ւառակն, զոր կը կրէ իբրև փոխանորդ մեծին Աստուծոյ: փարաւոն իբրև քըր. մայկետ՝ այս արժանապատուութեանց հետ՝ կը կրէ փետուրներ ևս, և իւր դէմքն աստուածուհւոյ մը կերպարա. նայ ներքև կ'երեւի, որ իւր պաշտպա. նողական թեկեր անոր վրայ կը տարա. ծէ: փարաւոնի խորհրդաւոր նշանն. րէն են՝ Սփինքս և Աւիւծ. երկուքն ալ կը գտնուին պատերազմական զրօշակի վրայ: Իշխանք և իշխանազունք 'ի թա. գաւորական տանէ՝ իբրև նշան կը կրեն զկողմնահիււքն, զոր փարաւոն իսկ կը կրէ իւր պատկերաց վրայ՝ ցլու կորա. ցեալ եղջեր ձևով: Հինգերորդ հարու. տութենէն առաջ՝ փարաւոնք մէկ վա.

հան ունէին , բայց անկէ վերջը շարու-
նակ երկու :

Փարաւոն իր երիտասարդութիւնը
կ'անցընէր տաճարում մէջ քրմաց քով ,
և կը դաստիարակուէր . նաև իբրև իշ-
խան՝ կերպով մը անոնցմէ կ'ախուսն ու-
նէր : Եւ ոչ զնեղու կէտն այս է՝ որ
քուրմը միանգամայն գիտունը էին , և
ասկէ կ'իմացուի՝ որ այս յարաբերու-
թիւնն միայն կրնար բարձրացընել փա-
րաւոնի համարումը ժողովրդեան մէջ :
Յիրաւի , ապատակութեան այս զգա-
ցունն նա Ստատուծութիւնն և նորա
գիտութիւնը ներկայացընող ծառայից ,
այս վատահոլութիւնն յԱստուածութիւնն
նոյնպէս երկիւղ և յոյս պատժոց կամ
վարձուց՝ հանդերձեալ կենաց մէջ ,
հաստատուն զօդ մը կը հիւսէին փոխա-
դարձաբար ժողովրդեան և թագաւո-
րին , մեծին և ստորակային , հրամայո-
ղին և հպատակողին մէջ . և 'ի վաղուց
'ի հասարակաց կարգադրեալ վարչու-
թիւնն կը մղէր զանոնք 'ի հաստատուն
յարաբերութիւն իշխանութեան և ար-
դարութեան , որով Նիլոսի հովտին հին
բնակիչքն այնչափ օգտակար կերպով
նշանաւոր հանդիսացան . այս ամենայն
յայտողէ ըրին զիրենք տիեզերական
պատմութեան թիւտեր վրայ արժա-
նաւոր և միանգամայն փառահեղ կեր-
պով՝ հին աշխարհի քաղաքակիրթ ազ-
գաց մէջ շարք մը թողլու :

Բայց փարաւոնի իշխանութեան անկ-
ման նշան մ'էր , ինչպէս նաև հին եգի-
պտական կրօնից , երբ Ռամէս ԺԱԻ
ժամանակ Ռայի քրմայեանն՝ իշխանին
վրայ վճռող և ընկճող ազդեցութիւն մը
կը բանեցընէր :

Փարաւոնի բնակութիւնն իւր պալա-
տան մէջ էր , որ թերևս 'ի հնումն սա-
ճարին հետ միացած էր , իսկ նոր տէ-
րութեան ժամանակ՝ առանձին յատուկ
շէնք էր : Արքունիք փառաւոր էին :
Իսկ իբրև պաշտօնեայք՝ կ'երևին ար-
քունի մատակարարն , գէտը և քուրմը ,
շտեմարանապետն , դանձապետն , չի-
նուածապետն , բժիշկը և մնայած իշ-
խանաւոր անձինք : Փարաւոն ամէն տեղ

իբրև սպարապետ կ'երևի , և աղբերակն
է ամենայն արդարութեան և օրինաց :
Բայց յայտնի է՝ որ իրեն գործոց մէջ բա-
րոյականն վեհագոյն կանոն դրուած էր :
Փարաւոն՝ մեռնելէն վերջ՝ առանձին
գերեզման կ'ընդունէր . 'ի հնագոյն
ժամանակս՝ բուրգ մը , իսկ յետոյ ժա-
մանակաւ՝ վիմափոր գերեզման մը :
Այս թագաւորական գերեզմաններս
միշտ մեծ պատուով պահուեցան . բայց
ժողովրդեան կարծիքն կը դատապար-
տէր փարաւոնաց վարչութեան գործե-
րը . այս պատճառաւ կը զաննէր որ ա-
նոնց գերեզմանները կը կործանէին և
կամ վրայէն անուննին կը փնջէին :

Փարաւոնի թափոն ժառանգական
էր . եթէ արական ժառանգութեան մէջ
անձ չգտնուէր , այն ժամանակ զբա-
տեքը կը ժառանգէին , որը կամ իրենք
կը կառավարէին , և կամ՝ աղնուականի
մը հետ ամուսնանալով՝ նոր յեղ մը
զահակալ կ'ընէին . և այս յեղական
ցեղին յայորդութեան օրէնքն շատ հին
էր : Սակայն առանձին սովորութիւն
մը կ'որ՝ որ փարաւոն իւր թագաւորու-
թեան վերջերք՝ իրեն որդին թափոն
վրայ կը բարձրացընէր իբրև թագաւո-
րակից :

Թագաւորութեան և վարչութեան
նպատակին համար՝ բովանդակ երկիրն
յերկուս մասունս բաժնուած էր , 'ի
վերին և 'ի Ստորին եգիպտոս . և այս
մասերէն իւրաքանչիւրն կը տրոհէր 'ի
վիճակս . այս բաժանումն ալ ամենա-
հին է : Այսպիսի վիճակներ կը գտնը-
ւին 22 'ի վերին եգիպտոս , և 20 'ի
Ստորինն : Դարձեալ այս վիճակս ալ
բաժնուած էր 'ի կալուածս . իրեն ա-
ռանձին վարչութիւն ունէր , և էր վիճա-
կաւոր իշխանի մը ձեռքին տակ : Այս
իշխանս , և այլ արքունի իշխանաւորք՝
կը կազմէին երկրին աշխուկանութիւ-
նը : Իսկ վիճակաւոր իշխանաց ընտրու-
թիւնն՝ փարաւոնի կ'իյնար . բայց այս
պատիւս ժառանգական էր , որով ոչ
միայն որդւոյն , այլ և թոռանց կ'անց-
նէր :

Սակայն աղնուականութիւնն բար-

ծրատիճան էր. և ի վաղեմի ժամա-
նակաց կը գտնենք զխաղաղութեան ար-
ժանաւոր՝ որ ծննդեամբ ազնուակա-
նութեան առնթներ՝ նաև անձնական
արժանաւորութիւնը բարձր իշխանու-
թեանց և մեծամեծ աւագութեանց կը
հասցընէին: Երեսիւն թի՛ արքունի մա-
տակարար և դպիր՝ մեմփիսական հա-
րըստութեան ժամանակ, ըստ Ռուժէի՝
Ռամիկ էր ծննդեամբ, բայց փարաւոնի
դուստրը կնութեան առաւ: Մի և նոյն
պատիւն ընդունեցաւ չորրորդ հարըս-
տութեան ատեն՝ երեսիկ շինուածա-
պետ մը: փարաւոնն Ռեզուլթադէն եւ-
կորդ՝ իրեն վարչութեան իբրև սկըզ-
բունը դրած էր, իր ծառայից մէջ ար-
ժանաւոր եղողաց որ և իցէ աստիճան
պատուոյ տալ ըստ պատշաճի օրինաց:
Վիճակի մը մատակարարութիւնն
բազմակերպ էր. և ի յիշատակարա-
նաց կը ստուգուի՝ որ վիճակին սահման-
ներն ամրացեալ էին. Նեղոսի եզերքը
ջրոյն ռուգման ժամանակ թումը կը
շինուէր, և մաքսերն կանոնաւորուած
էին, և այլն: Բաց ասկէ՝ իւրաքանչիւր
եգիպտացի՝ քաղաքային վարչութեան
նախագիտութիւնը պիտի ունենար,
ըստ իրեն կացութեան եղանակին:

Արդարութեան վարչութեան հա-
մար՝ սահմանեալ էր վնհադոյն դատա-
րան մը, Երեսնից դատաստան կոչմամբ,
զոր քուրմ և դպիրք կը կազմէին, որոյ
նախագահն ոսկեայ շղթայ մը կը կը-
րէր՝ իբրև նշան իւր իշխանութեան: Ան-
շան դէպքերը կը դատէր իւրաքան-
չիւր վիճակի մէջ՝ վիճակաւոր իշխանն և
կողմնապետն, քաղաքական յանցանաց
համար՝ փարաւոն միայն էր բարձրա-
դոյն ատեան բողոքոյ. օրինակ իմն, ի
գաւաճանութեան ընդդէմ՝ իւր անձին,
և այլ քրէական յանցանաց մէջ, Բաց
աստի՝ շինուածոց և հասարակաց իրաց
գլխաւոր պաշտօնեայ կար: Այս իշ-
խանութեանց շատն մէկու մը ձեռքը
ամիտփուած կ'ըլլային յաճախ, այս-
պէս Ռեզուլթադէն Առաջին փարաւոնի
ժամանակ՝ իրաւագէտն էր նաև պաշ-
տօնեայ հասարակաց զործոց, դատա-

ւոր և ճարտարապետ: Սակայն փարա-
ւոնի ձեռքն էր տյախշխանութեանց տու-
չութիւնն: Իսկ փարաւոնաց հարկաց
նկատմամբ, թէպէտ վարժած ենք ընդ-
հանրապէս մինչև այսօր զայն սաստկա-
պահանջ տեսնելու, այլ կ'երևի այնչափ
խիստ եղած պիտի չըլլայ: Քուրմը՝ զկնի
ժամանակաց նաև զինուորք՝ հարկէ ա-
զատ կալուած ունէին: Մնացածները եւ-
կրին արգասեաց հինգերորդ մասը փա-
րաւոնին կու տային, որով նաև ապա-
հով էին առանձնական հարկապահան-
ջութենէ: Ասոր վրայ յետոյ պիտի խօ-
սինք: Ձեռագործաց համար ալ տուրք
կար, և ասկէ զատ պատերազմի հարկ
մ'ալ: Հանդերձ այսու՝ հարկն չափէ
դուրս հարստահարող չէր: Եւ իբրև
հաւաստիք առ այս գիտենք թէ ժողո-
վուրդն յօժարակամ աւելի հարկ կու
տար, քան որչափ որ սակն կը պահան-
ջէր: Այս բանս Ամենհօթէփի բ' ժամա-
նակ հանդիպեցաւ:

Հարկերն՝ ըստ բնութեան իրաց կը
վճարուէին, քանի որ դրամ չկար. և
միայն փարաւոնի և երկրին վարչու-
թեան համար որոշեալ չէին, այլ և տա-
ճարին ու աստուածային պաշտամանց
համար:

Ուստի՝ ցարդ ըսածնուս համեմատ՝
փարաւոնաց երկրին վարչութիւնն ե-
րեք ճիւղի կը բաժնուէր. պատերազմ,
հասարակաց աշխատութիւնը և հարկք:

Իսկ գաղով օրինաց, ըստ որոց Հինն
եգիպտոս կը վարուէր, Դիոդոր Սիկի-
լիացին կ'ըսէ՝ որ սաներգումն և մար-
դասպանութիւնն մահուամբ կը պատ-
ժուէին. եթէ տղայ մը ծնողքը մեռցը-
նէր՝ կենդանոյն կ'աղբէին. եթէ ծնողք
սպաննէին իրենց որդիքը՝ պէտք էին ե-
րեք օր և երեք գիշեր՝ մեռեալը իրենց
բազկաց վրայ բռնել հասարակաց առ-
ջև: Դեռւոյ մը սպանութիւնն մահուամբ
կը պատժուէր: Դասալիք զինուորն քա-
ղաքական պատուէն կը կապուէր. իսկ
դատաստանի մէջ սուտ կ'պայտորին
ականջը և քիթը, և լրտեսին ալ լեզուն
կը կտրէին: Սմբաստանողն՝ որ չկարե-
նար ապացոյցանել իւր ամբաստանու-

թիւնը, այն պատժին տակ կ'իյնար, ինչ որ ինքը մտածած էր ամբաստանելոյն համար: Գարաւոնի կենաց դէմդաւաճաններն՝ պէտք էին իրենք գիրենք մեռցնել. իսկ շնութեան պատիժն՝ հազար հարուած գաւազանի էր առն համար, իսկ կնոջ՝ քիթն կը կտրուէր. կուսապղծութիւնն անդամահատմամբ կը պատժուէր: Դողութեան համար՝ գաւազանի հարուած սահմանուած էր: Ոճրագործութեան պատիժներէն էին գլխաւորապէս՝ գաւազանահարութիւն, բանտարդելութիւն, որը նաև կանանց համար կը գործադրուէին: Մահուան պատիժն կ'ըլլար կամ գլխատմամբ և կամ կախելով, եւ եթէ 'ի մահ դատապարտեալ կնիկ մը՝ մօտ ըլլար ծնանել՝ պէտք էր ծննդենէն վերջը պատժուէր, այս օրէնքս յեղիպտացոյց առին Յոյնք: Վաճառականութեան օրէնքն կը հրամայէր որ մաքսերն պէտք չէին առաւելու քան զգրամազուխն, և թէ ստացուածք միայն՝ եւ ոչ եթէ անձինք կը վճարուին փոխանակ պարտուց: Կային օրէնքներ ալ՝ որոց գործնական արժէքը, իմաստութիւնն և արդարութիւնը գրեթէ առանց բացառութեան խոստովանելու ենք: Իսկ ինչ որ՝ բանակի կը վերաբերի՝ այսպէս գիտենք մենք՝ որ հին եգիպտական բանակն յերկրտեսնայ կը կազմուէր, որը 'ի վարձ երեքամեայ ծառայութեան՝ տուրք տալէ և հարկէ ազատ երկիր մը կ'ընդունէին: Այս բանակս որոշուած էր զբաղն եղած յարձակմունքը յետո նահանջելու: Բռնականաբար այս պատրաստութիւնս ալ չէր բաւեր, երբ Թերագի մեծամեծ իշխանաց ձեռքով՝ Թուրքիան երկրորդ և Ռամաէս երկրորդ աշխարհակալութեան քաղաքականութիւնը մեծապէս զօրացոյցին. ուստի առձեռն պատրաստ Կուրեղ բանակի մը պէտք կար, վասն զի զինուորական կալուածատեարք՝ արտաքին պատերազմաց համար անգործածելի էին: Երբեմն այս բանակս կը բնար գրեթէ 400,000 մարդկան հասնիլ: Թիւ մը՝ որ համեմատութեամբ համաշխարհային ժողովրդեան, (որ 6-7. միլիոն

կը հաշուուէր) շատ մեծ չերևիր: Այս պատճառաւ ստացուեցան յետոյ ուրիշ վարձուոր գնդեր, այսինքն են, 1. իբեացիք, Յոյնք և փրնիկէի ծովային զօրքեր: Վեցերորդ հարստութեան ժամանակէն 'ի վեր կար յերաւի արգէն վարձուոր զինուորաց զունդ մը. բայց մինչև ց. քաններորդ հարստութեան օրերը՝ ասոնք յամենայնի տեղացի զօրքերէն պէտք էին միշտ յետագաս համարուել: Նախ Ամասեայ և իր յաջորդաց ասոն՝ այս վարձուոր գնդից մէջ (և մասնաւորաբար յունականին մէջ) միջին թիւն 'ի կեցողուն հաստատեալ էր. վասն զի անոնք աւելի կրթեալ էին և քաջագոյն 'ի պատերազմի քան զտեղացի զինուորս: Այսու՝ փարաւոն արաաքոյ կը զօրանար, բայց հայրենի հողոյն վրայ շատ անգոր էր, մինչդեռ անվստահութիւնն և նախանձն միշտ աւելի կը զօրանար 'ի մէջ տեղացոյց ընդդէմ օտարաց: Բաց ասով՝ այս զօրաբանակս պիտի ապրէր երկրին կերակրովք, և այս ծախքն, ինչպէս կ'ըսէ Հերոդոտոս՝ երթալով կը ծանրանար. և սոյն ինքն կը յարէ միանգամայն, թէ եգիպտական բանակին գլխաւոր զօրութիւնն կը կայանար նետածգութեան և յանդուզըն պատերազմելու մէջ: Եգիպտոսի զօրութեան և իշխանութեան ներկայացուցչութիւնն փարաւոնաց վրայ կեցողունացած ըլլալով՝ Եգիպտական պատմութիւնն գրեթէ բովանդակապէս կը վերածի պատմութեան փարաւոնաց: Փարաւոնի առջև ամենայն ինչ կը խոնարհէր, և ինքն իբրև գերագոյն էակ մը կ'երևի, ինչպէս որ Թուրքիան թիւ վրայ յօրինուած այս տաղս կը ցուցնէ.

« Ողջիյն, արքայդ Եգիպտոսի,
Դու արեգակն օտար ազգաց.
Մեծ ես անուամբդ երկրս վերայ,
Քո զօրութիւնդ է ահեղ.
Պես և իշխան դու բարեգոյն,
Յամաթ լինին այլաբաժնի 'ի նմանէ.
Եւ փարաւոն է արեգակըն պայծառ »:

Փարաւոնին վրայ այսպէս կը խօսուի՝
Նորա բաղդաւոր ժամանակին մէջ, բայց

չորս դար վերջը արդէն փարաւոնքնիւթ կ'ըլլան թշուառագոյն և սուտ շողորոր-
թութեանց: Այսպէս կը կոչեն զիւսմ-
սէս Զորորդը՝ « Ոսկեղէն լեռ մը. ինքն
իրեն աստուած՝ լուսեղէն պարունակաւ
զաշխարհ կը լուսաւորէ... արքայական
արժանապատուութիւնը կրկնապատ-
կեց... իւր անուամբ Նիլոս աստուա-
ծըն բերանը կը բանայ. իւր կենաց տե-
ւողութիւնն արեգական տեղութեան

չափ է... ինքն է այն՝ որոյ կ'ընծայէ
ժողովուրդն ամէն բան՝ որ ինչ կայ, և
այլն »:

Նախընթաց մասին մէջ փարաւոնի
անձն շատ յիշատակուեցաւ. ինչպէս
բախ՝ փարաւոնի պատմութիւնն՝ Եդիպ-
տոսի պատմութիւնն է: Հետեւեալ հա-
տուածովք՝ ակնարկ մը միայն պիտի ձը-
գենք անոր վրայ:

ԱՐԱԲԱԿԱՆ՝ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Արաբաց քաղաքականութիւնն Մահ-
մետէն կը սկսի. իրմէ առաջ այս ազգիս
քաղաքականութիւնն շատ ետ մնացեր
էր. Մահմէտ զայն կարգի դրաւ, որով Ա-
րաբք այնչափ զօրացան՝ որ իր յաջորդ-
ներն և աշակերտներն՝ արշաւեցին բո-
լոր աշխարհք գրաւելու: Գանի մը դա-
բու մէջ՝ զՄսորիս, զՄիջագետս և զԵ-
դիպտոս նուաճեցին, և Պարսից Սասա-
նեանց թագաւորութիւնը կործանե-
ցին: Մարգարէին մահուանէն դար մը
վերջը՝ մահմէտականութիւնն իր բա-
զուկները տարածեց յԱրևելք և յԱրև-
մուտս, ընդգրկելով զՄիջրիկէ՝ մինչև
յՈվկիանոս, զՍպանիա և զԳաղղիա
մինչև ի Սէվէն, զՄսորին և զՄիջին Ա-
սիա մինչև ի Հնդկիս: Սակայն քաղա-
քական կռիւներու պատճառաւ՝ խոր-
տակեցաւ այսպիսի ահաւոր միապետու-
թիւն մը. բայց իւրաքանչիւր մասունքն
ալ կենդանացան, և ամենքն ալ զօրա-
ւոր իշխանութիւններ եղան: Պաղտա-
տի ամիրաներն կարգաւորեալ կառա-
վարութիւն, կանոնաւոր վարչութիւն և
200 միլիոնի չափ հաստատուեալ եկա-
մատ ունէին: Արդի կառավարութեանց
նման՝ յօգուտ հասարակաց՝ աշխատու-
թեանց կը ձեռնարկեն, իրենց արքու-
նեաց շքեղութեամբ կը շլացնեն զԱ-
րևելք, և յունկնդրութիւն կ'ընդունին
ոսկիապատ դահլիճներու մէջ՝ Մեծին
Կարողոսի, Կոստանդնուպոլսի, Թաթա-
բաց, Հնդկաց և Զինաց նուիրակները:

Մահմէտական աշխարհին միւս կող-
մը, Գորտովայի խալիֆաներն՝ հարուստ
և արգասաւոր Սպանիոյ վրայ կը թա-
գաւորէին, և միշտ 300 միլիոնի չափ
եկամուտ ունէին. իրենց կառավարած
երկիրն՝ երկրագործութեամբ, վաճա-
ռականութեամբ, գեղարուեստիք, զի-
տութեամբ՝ Եւրոպայի մէջ ամենէն աւե-
լի նշանաւորներէն է: Իշխանութեան և
քաղաքականութեան կեդրոնն շատ ան-
գամ յՄիջրիկէ կը փոխուի, բայց ամէն
քաղաքներէն աւելի նշանաւոր է՝ նոր Ե-
դիպտոսի մայրաքաղաքն Գահիրէ, Պա-
թիման իշխանաց յաղթական բնակա-
վայրն, որ կը պայքարի Պաղտատի և
Գորտովայի հետ:

Մահմէտական ամէն վարչութիւնը
գրեթէ մի և նոյն օրէնքներն ունէին,
ծանօթ աշխարհին մէկ ծայրէն սկսեալ
ցմիւս ծայրն՝ նոյն կրօնքն և նոյն լեզուն
ունէին. հեռաւոր արշաւանք, յարաբե-
րութիւնք, փոխանակութիւնք, շատ
դիւրացան: Արաբայիք՝ նաւորդ, ճանա-
պարհորդ, վաճառական և աշխարհա-
գէտ էին: Լիւրիկսդոն և Սղանլիք ճա-
նապարհորդներէն տասը դար յառաջ,
Արաբաց կարաւաններն ամենայն հան-
դըստեամբ մինչև Ափրիկէի խորերը
կը յառաջէին. 1154ին Էտրիսի՝ իւր
տախտակաց վրայ արդէն ծրագրած էր
վերին Նեղոսի լճակները. Գալովպոսի և
Կամայի արշաւանքէն յառաջ իրենք
միայն կը նաւարկէին Եւրոպայէն մինչ-